

28(47)

1-Մ ԹԿՅ

ПРОЛЕТАРИИ ВСЕХ СТРАН, СОЕДИНЯЙТЕСЬ!  
ПРОЛЕТАРИ ВСІХ КРАЇН, ЄДНАЙТЕСЯ!  
ПРОЛЕТАРЫ ВСІХ КРАЇН, ЯДНАЙТЕСЯ!  
БԱՆԱԴՆԻՔՆԵ՛Ր ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ՝  
ԲԱՐԿԻՅ ԷՃԷՐԸՆԻ ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ՝  
புலகம்மகம்மம் மகம்மம் மகம்மம், மகம்மம்மம்!  
ԲԱՆԱԿ ԹՎՈՂՆԵՐԻՆ՝ ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ՝



VISU ŠALIŲ PROLETARAI VIENYKITĖSI!  
ПРОЛЕТАРЬ ДИН ТОАТЕ ЦĚРИЛЕ, УНИЩИ-ВЭ!  
VISU ZEMJU PROLETĀRIEŠI, SAVIENOJĪETIES!  
ԲԱՐԿԻՅ ԹՎՈՂՆԵՐԸՆԻ ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ՝  
ПРОЛЕТАРХОН ХАМАН МАМЛАКАТХО, ЯК ШАВЕД!  
ԹՐՈՒԵՍԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԿՍԵՆՔ  
ՃՄԼԻ ԵՐՏԼԱՐԿՆ ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ՝  
KÖIGI MAADE PROLETAARIASED, ÜHINEGE!

**ՍՈՎԵՏԱԿԱՆ**

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՄԻՈՒԹՅԱՆ**

**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ**

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 44-ՐԳ ՏԱՐԻ

**№ 1 (2075)**

7 հունվարի 1981 թ.

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
Մ Ո Ս Կ Վ Ա



# ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 44-ՐԴ ՏԱՐԻ

№ 1 (2075)

7 հունվարի 1981 թ.

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նոր տարվա շնորհավորանք սովետական ժողովրդին:

Լ. Ի. Բրեժնևի ելույթը կենտրոնական հեռուստատեսությամբ և համամիութենական ռադիոյով:

### ԱՌՆՁԻՆ ԲԱԺԻՆ

1. Սովետա-հնդկական համատեղ դեկլարացիա:
2. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Վ. Ի. Պոպովին համատեղության կարգով Մալթայում ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան նշանակելու մասին:
3. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը վերացնելու կոնվենցիան վավերացնելու մասին:
4. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը եկամուտների ու գույքի կրկնակի հարկումից խուսափելու մասին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Նորվեգիայի Թագավորության համաձայնագիրը վավերացնելու մասին:
5. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը արտոնագրային արարողության նպատակների համար միկրոօրգանիզմների ավանդատվության միջազգային ճանաչման մասին Բուդապեշտի պայմանագիրը վավերացնելու մասին:

### ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

6. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը «Հայհիդրոէներգաշին» շինարարական վարչությունը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:
7. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գ. Մ. Մարտաշվիլուն ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
8. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը գրող Ասկադ Մուխթարին (Ա. Մուխթարովին) ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
9. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը միլիցիայի լեյտենանտ Վ. Ռ. Խուսահինովին Կարմիր աստղի շքանշանով պարգևատրելու մասին:
10. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Կ. Ֆ. Կուլակովին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:
11. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ն. Ա. Կրյուչկովին սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին:



12. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ավիացիայի մարշալ Ն. Յա. Սավինցևի Լոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:
13. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը գրող Ս. Վ. Վահանյան (Խաչիկյանին) ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
14. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը գրող Բ. Մոմիշ-Ուլային ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
15. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը կենտրոնական ներմուծական և արտահանողական գործառնական հարկերի վերաբերյալ ընկ. ընկ. Ս. Վ. Վիտեբսկային և Յու. Բ. Լեյտանին «ՍՍՀՄ ժողովրդական արտիստ» պատվավոր կոչում շնորհելու մասին:
16. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Է. Լ. Անդրոնիկաշվիլուն կենտրոնական շքանշանով պարգևատրելու մասին:
17. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ինտենդանտական ծառայության գեներալ-լեյտենանտ Ն. Ի. Գոլդբերգին Լոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:
18. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Պ. Գ. Մակեևային Լոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:
19. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Գորկու ջրային տրանսպորտի ինժեներների ինստիտուտը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:
20. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Մոսկվայի տիկնիկային թատրոնը «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:
21. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Գ. Յ. Կրամինովին Լոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:
22. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Չերոքսարիի ՍՄԿԿ XXIV համագումարի անվան ագրիկուլտուր գործարանը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:
23. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Կ. Ի. Վաշենկոյին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
24. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ստավրոպոլի երկրամասի «Պրեզդումնի» սովետի բանվոր Ն. Ն. Ժուրբինին Կարմիր աստղի շքանշանով պարգևատրելու մասին:
25. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Է. Մ. Կրուտինսոնին Լոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:
26. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ բժշկական արդյունաբերության մինիստրության Սվերդլովսկի «Ուրալսինթեզ» բիմիկա-դեղագործական արտադրական միավորման առավել աչքի ընկած աշխատողներին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին:
27. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Վ. Ի. Լարինին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:
28. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ա. Պ. Ուշակովին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
29. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ-ում Գերմանական Գեմեկրատական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան ընկ. Հարրի Օտտին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
30. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Կ. Սագինդիկովին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
31. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ղազախական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Կարատաևին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
32. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Յ. Գաուզեին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
33. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վ. Գ. Պինչուկին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:
34. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը գրող Տ. Ի. Զատիկին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:
35. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Վ. Ա. Մալիշևին Լոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:
36. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Լ. Ա. Բեզմենսկուն Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:
37. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ռ. Ս. Օվինիկովին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
38. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ուրալի սև մետաղների գիտահետազոտական ինստիտուտը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:

39. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ադրբեյջանի նավթային մեքենաշինության գիտահետազոտական ինստիտուտը «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:
40. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ռյազանի պետական մանկավարժական ինստիտուտը «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:
41. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն. Ն. Մալինովսկուն սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին:
42. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը «Զեյագեսստրոյ» շինարարության վարչության աշխատողներին սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին:
43. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Սարատովի պոլիտեխնիկական ինստիտուտի առավել աչքի ընկած աշխատողներին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին:
44. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Էստոնական ՍՍՀ ժողովրդական նկարիչ Ի. Ա. Տոունին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:
45. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը «Բելատուս» հրատարակչությունը ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
46. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ս. Ի. Սուունիչենկոյին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
47. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Բելոռուսական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Վ. Ա. Պիլիպովիչին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին:

ԵՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

Հաղորդագրություն առանձին ընտրական օկրուգներում ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատների ընտրությունների մասին:

ՍՍՀՄ Գերագույն սովետում:

ՍՍՀՄ-ում Աֆղանստանի Գեմեկրատական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հարրի Մանդարի հավատարմագրերը հանձնեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի առջին տեղակալ Վ. Վ. Կուզնեցովին:

Պարգևատրում ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով:

«Հերոսուհի մայր» կոչման շնորհում բազմազավակ մայրերին:


ՍՍՀՄ Գերագույն սովետի պալատների արտաքին գործերի հանձնաժողովների պատվիրակության այցը Ֆրանսիա:

Еженедельное издание Верховного Совета СССР на армянском и русском языках

Адрес Отдела опубликования актов Верховного Совета СССР при Секретариате Президиума Верховного Совета СССР: 103795, ГСП, Москва, Центр, улица Чехова, 3. Телефон 299-39-14. Издательство — Центр, Пушкинская пл., 5. Телефон отдела распространения и экспедирования 209-34-93.

Формат 70×108<sup>1</sup>/<sub>16</sub>. Бумага тип. № 1. Печ. л. 4,0. Усл. печ. л. 5,6. Зак. 4233.

Ордена Трудового Красного Знамени типография «Известий Советов народных депутатов СССР» имени И. И. Скворцова-Степанова. Москва, Пушкинская пл., 5.





ՆՈՐ ՏՍՐՎԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Լ. Ի. ԲՐԵՃՆԻ ԵՐԱՅՔԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄԵՆՆԵՐԻ  
ԵՎ ԿԱՄԱԴԻՍԻՆԱԿԱՆ ՈՂԻՈՅԻՆ

Թանկագին ընկերներ, բարեկամներ:

Կրեմլյան կուրանտները համրում են 1980 թվականի վերջին բուսաները: Անցնող տարին շատ բան ներառավ ի մեջ՝ այդ տարում եղան դժվարություններ և դառնություններ, եղան նաև հաջողություններ և ուրախություններ: Բայց մենք նրան ճանապարհում ենք բարի զգացումով:

Լենինյան փառապանծ հոբելյանի տարում սովետական մարդիկ աշխատեցին անձնվիրաբար և ոգեշնչված: Այդ հնգամյակում նոր խոշոր քայլ կատարվեց էկոնոմիկայի զարգացման գործում: Բարձրացավ ժողովրդի բարեկեցությունը: Ավելի քան 50 միլիոն մարդ բնակարանամուտ տոնեց: Է՛լ ավելի զարգացավ սոցիալիստական դեմոկրատիան: Սովետական Միության ժողովուրդները ապրում են որպես միասնական, համերաշխ ընտանիք: Պատշաճ մակարդակի վրա է պահպանվում մեր պաշտպանունակությունը:

Սրտագին շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աշխատում են գործարաններում ու ֆաբրիկաներում, նավթահանքերում, տրանսպորտում, դաշտերում ու ֆերմաներում, կառուցում տներ, զցում մայրուղիներ, կառուցում էլեկտրակայաններ, ովքեր ստեղծում են հողեր արժեքներ, սովորեցնում ու դաստիարակում երեխաներին, պահպանում մարդկանց առողջությունը, զարդարում նրանց կենցաղը, բոլոր նրանց, ովքեր գիտակցաբար ու բեղմնավոր կերպով աշխատում են ի բարօրություն սոցիալիստական հայրենիքի:

Երկիրը քաղաքական և աշխատանքային մեծ խանդավառության պայմաններում նախապատրաստվում է ՍՄԿԿ XXVI համագումարին: Դա ցույց է տալիս ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման առաջիկա հնգամյակի և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների նախագծի քննարկման ընթացքը: Հատուկ նշանակություն է տրվում գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը, պարենային պրոբլեմի լուծմանը, ժողովրդական սպառման ապրանքների թողարկման ավելացմանը, բնակարանային շինարարությանը:

Մենք լիակատար հիմքով հայտարարում ենք՝ ժողովուրդն ու կուսակցությունը միասնական են: Այդ անխախտ միասնությունը կոմունիզմի համար մղվող մեր պայքարի նոր հաջողությունների երաշխիքն է:

Սովետական ժողովուրդը միահամուռ հավանություն է տալիս ու շերմորեն պաշտպանում է կոմունիստական կուսակցության և սովետական պետության լենինյան ներքին և արտաքին քաղաքականությունը: Սովետական Միության արտաքին քաղաքականությունը հետապնդում է պարզ ու ազնիվ նպատակներ: Մենք խաղաղություն ենք ուզում բոլոր ժողովուրդների համար: Ազատության, արդարության և առաջադիմության իդեալներին մեր նվիրվածությունը անսասան է: Սովետական Միությունը վճռականորեն հանդես է գալիս հօգուտ լարվածության թուլացման, հօգուտ համագործակցության ամրապնդման և հաստատակամ «ոչ» է ասում սպառազինությունների մրցավազքին, իմպերիալիստական քաղաքականության հետևանքով առաջացող բարդություններին ու կոնֆլիկտներին:

Սովետական Միությունը աշխարհում լավ բարեկամներ շատ ունի: Նոր տարվա նախօրեին մենք մեր լավագույն բարեմաղթություններն ենք հայտնում սոցիալիզմի երկրների աշխատավորներին, կոմունիստական, բանվորական, ազգային-դեմոկրատական կուսակցություններին, իմպերիալիզմի, ռեակցիայի և պատերազմի դեմ պայքարող բոլոր մարտիկներին:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների խորհրդի անունից նոր տարվա առթիվ ի սրտե շնորհավորում եմ սովետական հերոսական բանվոր դասակարգին, պանծալի կոլտնտեսային գյուղացիությանը, ժողովրդական մտավորականությանը:

Քաջառողջություն ձեզ, լավ տրամադրություն, հաջողություններ աշխատանքում, ուսման, ստեղծագործության մեջ:

Ամանորյա ողջույն հեղափոխության, պատերազմի և աշխատանքի վետերաններին, հայրենիքի խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը ձեզ:

Ամբողջ սրտով երջանկություն և ուրախություն եմ մաղթում սովետական կանանց:

Ձերմ շնորհավորանքներ սովետական հիանալի երիտասարդությանը, բանակի և նավատորմի քաջարի ռազմիկներին:

Լավագույն մաղթանքներ բոլոր նրանց, ովքեր Նոր տարվա գիշերը կանգնած են տասնմեկերորդ հնգամյակի աշխատանքային հերթափոխի, աշխուրջ պահպանում են սովետների երկրի սրբազան սահմանները, աշխատում հայրենի հողից հեռու:

Թո՛ղ յուրաքանչյուր տան մեջ, յուրաքանչյուր ընտանիքում միշտ բարօրություն և համաձայնություն լինի:

Շնորհավո՛ր Նոր տարի, թանկագին ընկերներ: Նոր երջանկություն:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

1 Սովետա-հնդկական համատեղ դեկլարացիա

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը և Հնդկաստանի Հանրապետությունը,

ելենելով իրենց միջև հաստատված սերտ ու ավանդական բարեկամության հարաբերություններից և արտահայտելով այդ հարաբերությունները է՛լ ավելի զարգացնելու իրենց կառավարությունների ու ժողովուրդների անսասան վճռականությունը,

գիտակցելով իրենց պատասխանատվությունը ժողովուրդների խաղաղության ամրապնդման համար և մտահոգություն հանդես բերելով արդի միջազգային իրադրության բարդացման առթիվ,

վերստին հավաստելով իրենց ընդհանուր նվիրվածությունը խաղաղ գոյակցության սկզբունքներին համապատասխան ժողովուրդների համագործակցության զարգացման գործին,

վճռականությամբ սոգորված լինելով անդուլ կերպով պայքարելու հանուն խաղաղության ու միջազգային անվտանգության, հանուն ժողովուրդների ազգային անկախության, ընդդեմ իմպերիալիզմի, գաղութատիրության, նեոգաղութատիրության, ռասիզմի ու ապարտեյիդի բոլոր դրսևորումների, հանուն մարդկության վսեմ իդեալների, որոնք վավերագրված են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ,

իրենց անսասան մտադրությունն են հայտնում ՍՍՀՄ-ի ու Հնդկաստանի խաղաղության, բարեկամության ու համագործակցության պայմանագրին համապատասխան, այսուհետև էլ ամրապնդել ու խորացնել սովետա-հնդկական բարեկամական ու փոխշահավետ համագործակցությունը ի շահ երկու երկրների ժողովուրդների, հանուն ամբողջ աշխարհի խաղաղության ու անվտանգության գործի:

I

Սովետական Միությունը և Հնդկաստանը խորին գոհունակությամբ նշում են, որ իրենց փոխհարաբերությունները, որոնք տասնամյակներ շարունակ բեղմնավոր կերպով զարգանում են բարեկամության ու վստահության մթնոլորտում, իրենցից ներկայացնում են սոցիալ-տնտեսական տարբեր սիստեմներ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքի գործնական ամրամնավորման վառ օրինակ: Այդ հարաբերությունները, ի շահ երկու երկրների ժողովուրդների, կառուցվում են հավասարության ու փոխադարձ հարգանքի հիմքի վրա, միմյանց սովերենության խստիվ պահպանման և ներքին գործերին չմիջամտելու հիմքի վրա:

Կողմերը համոզված են, որ Սովետական Միության ու Հնդկաստանի



խաղաղության, բարեկամության և համագործակցության պայմանագիրը զինամիկորեն զարգացող իրենց բազմակողմանի հարաբերությունների և երկու երկրների ժողովուրդների ավանդական բարեկամության բարձր մակարդակի կենդանի մարմնավորումն է, որ Ասիայի և ամբողջ աշխարհի խաղաղության ու կայունության կարևոր գործոնն է:

Նրանք գոհունակությամբ նշում են զգալի առաջադիմությունը իրենց տնտեսական, առևտրական և գիտատեխնիկական համագործակցության ասպարեզում: Զարգանալով պլանային ու երկարաժամկետ հիման վրա՝ տնտեսական ու առևտրական համագործակցության հետագա զարգացման 1973 թվականի նոյեմբերի 29-ի համաձայնագրին համապատասխան և տնտեսական, առևտրական ու գիտատեխնիկական համագործակցության 1979 թվականի մարտի 15-ի երկարաժամկետ ծրագրին համապատասխան, այն էական ավանդ է ներդնում երկու երկրների ժողովուրդների առջև կանգնած ժողովրդատնտեսական խնդիրների լուծման գործում: Այսպես, ՍՍՀՄ-ի և Հնդկաստանի փոխադարձ ապրանքաշրջանառությունը 1980 թվականին, 1975 թվականի համեմատությամբ, աճել է ավելի քան երկու անգամ, ինչպես որ նախատեսված էր 1973 թվականի նոյեմբերին Լ. Ի. Բրեժնևի և Ի. Գանդիի ստորագրած սովետա-հնդկական համատեղ ղեկարացիայով:

Սովետական Միությունը կշարունակի աջակցություն ցույց տալ Հնդկաստանում խոշորամասշտաբ օբյեկտների ստեղծմանը, նրա էկոնոմիկայի առանձնապես կարևոր ճյուղերի զարգացմանը: Կողմերը վստահ են, որ սույն այցի ընթացքում կնքված համաձայնագրերը նոր խթան կձևառնեն իրենց էլ ավելի սերտ տնտեսական համագործակցության զարգացման համար:

Հնդկական կողմը բարձր է գնահատում Սովետական Միության ներդրած կարևոր ավանդը Հնդկաստանի այն ջանքերում, որոնք նպատակամղված են ինքնապահովման հասնելուն, և նրա այն հաջողություններում, որ ձեռք են բերվել ոչ միայն էկոնոմիկայի, այլև մյուս կարևոր բնագավառներում:

Երկու կողմերը հավաստեցին, որ իրենք մեծ նշանակություն են տալիս ազգային մշակույթների փոխհարստացմանը, Սովետական Միության և Հնդկաստանի ժողովուրդների բարեկամության կապերի ու փոխըմբռնման ամրապնդմանը՝ մշակութային փոխանակումների ու կոնտակտների ընդլայնման միջոցով:

II

Սովետական Միությունը և Հնդկաստանը ելնում են այն բանից, որ իրենց փոխըմբռնման, վստահության և բազմակողմանի համագործակցության հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն Ասիայի և ամբողջ աշխարհի խաղաղության և կայունության համար: Նրանք վերստին հավաստում են իրենց վճռականությունը՝ այսուհետև էլ այդ հարաբերությունները զարգացնելու այնպես, որ դրանք արդյունավետորեն նպաստեն միջազգային իրադրության առողջացմանը:

Սովետական Միությունը և Հնդկաստանը հաստատ հավատում են, որ մարդկության առջև ծառայած կարևորագույն խնդիրը խաղաղության ամրապնդումն է և նոր համաշխարհային պատերազմի կանխումը: Նրանք ըստ ամենայնի աջակցություն ցույց կտան այդ ազնիվ նպատակին հասնելու ջանքերին:

Կողմերը մտահոգությամբ են նշում աշխարհի իրադրության բարդացումը, չլուծված պրոբլեմների պահպանումը և լարվածության նոր օջախների առաջացումը: Նրանք հանդես են գալիս միջազգային լարվածության թուլացումը պահպանելու և զարգացնելու, այդ պրոցեսին համընդհանուր բնույթ տալու օգտին:

Սովետական Միությունը և Հնդկաստանը հավաստում են իրենց այն համոզմունքը, որ պետությունների հարաբերությունները պետք է զարգանան այնպիսի հիմնարար և հանրաձայն սկզբունքների բազայի վրա, ինչպիսիք են ուժի գործադրումից կամ ուժով սպառնալուց հրաժարվելը, սովերենության հարգումը, հավասարությունը, տերիտորիալ ամբողջականությունը, սահմանների անխախտությունը և միմյանց ներքին գործերին չմիջամտելը:

Հնդկական կողմը բարձր է գնահատում Սովետական Միության այն

կոնստրուկտիվ ջանքերը և առաջարկությունները, որոնք նպատակամղված են սպառազինությունների մրցավազքը դադարեցնելու, զինաթափման և միջազգային լարվածության մեղմացման հասնելուն:

Սովետական կողմը բարձր է գնահատում միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման գործում այն ծանրակշիռ ավանդը, որ ներդնում է Հնդկաստանի՝ չմիանալու վրա հիմնված խաղաղասիրական արտաքին քաղաքականությունը:

Կողմերը նշում են, որ միջազգային իրադրության բարդացման և սպառազինությունների մրցավազքի ուժեղացման կապակցությամբ հրամայաբար անհրաժեշտ է մշակել առավել անհետաձգելի պրոբլեմների լուծման նպատակին ուղղված կոնկրետ միջոցառումներ:

Սովետական Միությունը և Հնդկաստանը հաստատ համոզված են, որ աշխարհի առջև կանգնած առաջնահերթ կարևորություն ունեցող խնդիրը սպառազինությունների մրցավազքի, ամենից առաջ միջուկային սպառազինությունների մրցավազքի դադարեցումն է և արդյունավետ միջոցների իրագործումը արդյունավետ միջազգային վերահսկողության ներքո ընդհանուր և լրիվ զինաթափման համար: Կողմերը վերստին իրենց պատրաստակամությունն են հայտնում միմյանց հետ և մյուս բոլոր պետությունների հետ լիովին համագործակցելու այդ նպատակին հասնելու գործում:

Սովետական Միությունը և Հնդկաստանը կարևորագույն նշանակություն են տալիս սպառազինությունների մրցավազքի, առանձնապես միջուկային սպառազինությունների մրցավազքի դադարեցման անհետաձգելի միջոցների ձեռնարկմանը և այդ միջոցառումների արդյունավետ կենսագործմանը: Նրանք կոչ են անում շուտափույթ կերպով միջոցներ ձեռնարկել՝ նպատակ ունենալով միջուկային զենքի փորձարկումների լրիվ և ընդհանուր արգելումը, քիմիական զենքի արգելումն ու վերացումը, մասսայական ունչացման զենքի նոր տեսակների ստեղծման արգելումը: Այն միջոցների մի մասը, որոնք կազատվեն զինաթափման պրոցեսում, պետք է հատկացվի զարգացող երկրներին օգնություն ցույց տալու նպատակին:

Սովետական Միությունը և Հնդկաստանը վերստին հավաստում են այն առաջնահերթ նշանակությունը, որ իրենք տալիս են Ասիայի խաղաղության ու կայունության պահպանման և ամրապնդման ասպարեզում համագործակցության զարգացմանը՝ խաղաղ գոյակցության սկզբունքների հիման վրա: Նրանք համոզված են, որ Ասիայում և առհասարակ ամբողջ աշխարհում գոյություն ունեցող չլուծված պրոբլեմները կարող են և պետք է կարգավորվեն խաղաղ միջոցներով, որը աշխարհի այդ շրջանի երկրներին թույլ կտար իրենց եռանդը նվիրել ազգային զարգացման խնդիրների իրականացմանը:

Կողմերն ընդգծում են մերձավորարևելյան պրոբլեմի համապարփակ, կայուն և արդարացի կարգավորման հրամայական անհրաժեշտությունը՝ Իսրայելի օկուպացրած բոլոր արաբական տերիտորիաներից նրա զորքերի լրիվ դուրսբերման, Պաղեստինի արաբ ժողովրդի արդար պահանջների բավարարման և նրա օրինական իրավունքների, այդ թվում սեփական անկախ պետություն ստեղծելու նրա անկապտելի իրավունքի ապահովման, ինչպես նաև Մերձավոր Արևելքի բոլոր պետությունների անկախ գոյության և զարգացման իրավունքների ապահովման հիման վրա:

Երկու կողմերը լուրջ մտահոգություն են արտահայտում Հարավ-արևմտյան Ասիայում լարվածության օջախների առթիվ և կրկին հավաստում են իրենց այն համոզմունքը, որ այդ շրջանի պրոբլեմները պահանջում են քաղաքական խաղաղ լուծումներ՝ լիովին հարգելով այնտեղ գտնվող երկրների անկախությունը, սովերենությունը, տերիտորիալ ամբողջականությունը և չմիանալու ստատուսը: Նրանք այդ երկրներին կոչ են անում շուտափույթ կերպով դադարեցնել զինված կոնֆլիկտները, հանդես բերել զսպվածություն և կոնստրուկտիվ կերպով համագործակցել հանուն լարվածության նվազեցման ու խաղաղության վերահաստատման: Սովետական Միությունը և Հնդկաստանը կրկին հանդես են գալիս այդ շրջանի երկրների ներքին գործերին դրսից ցույց տրվող միջամտության բոլոր ձևերի դեմ: Նրանք համոզված են, որ միայն բանակցությունների միջոցով քաղաքական լուծումը կարող է երաշխավորել այնտեղ գոյություն ունեցող պրոբլեմների կայուն կարգավորում:



Սովետական Միությունը և Հնդկաստանը պաշտպանում են Հարավ-արևելյան Ասիայի պետությունների ձգտումը՝ առողջացնելու այդ շրջանի իրազրույթությունը և Հարավ-արևելյան Ասիան դարձնելու ամուր խաղաղության ու կայունության շրջան: Երկու կողմերը պաշտպանում են նաև Հարավ-արևելյան Ասիայի երկրների այն ջանքերը, որոնք նպատակադրված են բարիդրացիության և համագործակցության հարաբերությունների զարգացմանը: Սովետական Միությունը և Հնդկաստանը հանդես են գալիս այդ երկրների ներքին գործերին դրսից ցույց տրվող միջամտության դեմ:

Սովետական Միությունը և Հնդկաստանը հավաստում են իրենց պատրաստակամությունը՝ համագործակցելու Հնդկական օվկիանոսը խաղաղության գոտի հայտարարելու մասին ՄԱԿ-ի ղեկավարացիայի շուտափույթ կենսագործման ասպարեզում և պաշտպանում են այդ հարցի առթիվ կոնֆերանս անցկացնելու ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումը: Նրանք կոչ են անում վերացնել այդ շրջանում եղած բոլոր օտարերկրյա ռազմական ու ռազմածովային բազաները, ինչպիսին է, օրինակ, Դիեգո Գարսիան, Թույլ շտալ նոր բազաների ստեղծումը և դատապարտում են Հնդկական օվկիանոսում օտարերկրյա ռազմական ներկայությունը ընդլայնելու բոլոր փորձերը՝ ինչ պատրվակով էլ դրանք ձեռնարկվեն:

Կողմերը կոչ են անում անշեղորեն կատարել գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու ՄԱԿ-ի ղեկավարացիան՝ Հնդկական օվկիանոսում գտնվող այն բոլոր տերիտորիաների վերաբերմամբ, որոնք դեռևս մնում են գաղութային տիրապետության տակ: Նրանք պաշտպանում են Մավրիկոսի Պետության այն արդար պահանջը, որ իրեն վերադարձվի Չագոսի արշիպելագը, ներառյալ Դիեգո Գարսիա կղզին:

Սովետական Միությունը և Հնդկաստանը ամենահրատապ խնդիրներից մեկն են համարում միջազգային տնտեսական հարաբերությունների վերակառուցումը արդարացի ու դեմոկրատական հիման վրա, համաշխարհային նոր տնտեսական կարգի հաստատումը: Նրանք վճռականապես դատապարտում են միջպետական տնտեսական հաղորդակցման մեջ նեոգաղութատիրության, խտրականության և ճնշման մեթոդների քաղաքականության բոլոր դրսևորումները: Կողմերը հանդես են գալիս մասնավորապես զարգացող երկրների կողմից արտահանվող ապրանքների արդարացի, կայուն և համարժեք գների ապահովման օգտին:

Սովետական Միությունը և Հնդկաստանը համակարծիք են, որ չմիանալու շարժումը խաղաղության պահպանման ու ամրապնդման և միջազգային լարվածության թուլացման կարևոր գործոն է: Նրանք նշում են այն դրական դերը, որ չմիանալու շարժումը կարող է խաղալ աշխարհի տարբեր շրջաններում կոնֆլիկտային իրավիճակների խաղաղ կարգավորման գործում և դրականորեն են գնահատում չմիանալու շարժման համապատասխան նախաձեռնությունները:

Սովետական Միությունը բարձր է գնահատում Հնդկաստանի՝ որպես չմիանալու շարժման ակտիվ մասնակցի, դերը աշխարհի խաղաղության պահպանման մեջ իր ավանդը մեծացնելու գործում, իմպերիալիզմի, գաղութատիրության, նեոգաղութատիրության, ռասիզմի, ապարտեիդի և տիրապետության բոլոր ձևերի դեմ մղվող պայքարում:

Սովետական Միությունը և Հնդկաստանը, որոնց ժողովուրդները դարեր շարունակ իրենց տաղանդով և աշխատանքով նպաստում են մարդկային քաղաքակրթության զարգացմանը, անհրաժեշտ են համարում աշխարհի բոլոր պետությունների և ժողովուրդների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ համաշխարհային գործերի ընթացքը ներկայումս առաջին պլան է մղել համապարփակ նշանակություն ունեցող այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են երկրազնդի էներգետիկայի ռազմաօգտագործումը, էներգիայի նոր աղբյուրների յուրացումը, ամբողջ մարդկության օգտին համաշխարհային օվկիանոսի հարստությունների և տիեզերական տարածության հետազոտությունների արդյունքների օգտագործումը, ներկա և գալիք սերունդների համար բնության պահպանումը, հիվանդությունների և սովի վերացումը:

III

Սովետական Միությունը և Հնդկաստանը բարձր են գնահատում իրենց փոխհարաբերությունների գլխավոր հարցերում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային կարևոր պրոբլեմներում կանոնավոր կոնտակտներ պահպանելու լավ ավանդույթը, որը նպաստում է տարբեր բնագավառներում սովետա-հնդկական համագործակցության խորացմանը: Նրանք կշարունակեն քաղաքական մակարդակով իրենց կոնտակտների և կոնսուլտացիաների զարգացման, տնտեսական և առևտրական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության հետագա ընդլայնման և ամրապնդման պրակտիկան:

Կողմերը հատուկ նշանակություն են տալիս սովետա-հնդկական բարձր մակարդակի հանդիպումներին և կոնտակտներին, որոնք հնարավորություն են ընձեռում ամփոփելու Սովետական Միության ու Հնդկաստանի հարաբերությունների զարգացման արդյունքները և նախատեսելու նոր բնագծեր, խորացնում են նրանց փոխըմբռնումը և համագործակցությունը ընդհանուր խաղաղության ամրապնդման գործում: Նրանք խորին գոհունակություն արտահայտեցին ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևի Հնդկաստան կատարած պաշտոնական բարեկամական այցի արդյունքների առթիվ: Այդ այցը մեծապես նոր բովանդակությամբ հարստացրեց սովետա-հնդկական ավանդական բարեկամությունն ու համագործակցությունը, ծանրակշիռ ավանդ եղավ ամբողջ աշխարհի խաղաղության և անվտանգության ամրապնդման ասպարեզում:

- Այցի ժամանակ ստորագրվեցին հետևյալ փաստաթղթերը.
1. Տնտեսական ու տեխնիկական համագործակցության համաձայնագիր:
  2. 1981—1985 թվականների առևտրական համաձայնագիր:
  3. Կուլտուրայի, գիտության և կրթության բնագավառում փոխանակումների 1981—1982 թվականների ծրագիր:
  4. Կինեմատոգրաֆիայի բնագավառում համագործակցության համաձայնագիր:

Լ. Ի. Բրեժնևը Հնդկաստանի Հանրապետության ղեկավարությանը և ժողովրդին անկեղծ երախտագիտություն հայտնեց այն ջերմ ընդունելության համար, որ ցույց տրվեց իրեն և իրեն ուղեկցող անձանց: Նա Հնդկաստանի պրեզիդենտ Նիլամ Սանջիվա Ռեդիին և Հնդկաստանի պրեմիեր մինիստր Ինդիրա Գանդիին հրավիրեց այցելել Սովետական Միություն: Հրավերները ընդունվեցին շնորհակալությամբ:

ՄՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ  
 Լ. Բրեժնև  
 Զնդկաստանի Հանրապետության պրեմիեր մինիստր  
 Ի. ԳԱՆԴԻ

Նյու Դելի, 10 դեկտեմբերի 1980 թվականի

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**2** ԸՆԿ. Վ. Ի. Պոպովին համատեղության կարգով Մալթայում ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան նշանակելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է.

Մեծ Բրիտանիայում ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան ընկ. Վիկտոր Իվանովիչ Պոպովին նշանակել համատեղության կարգով Մալթայում ՍՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպան:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնև

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Մ. Գեորգև

Մոսկվա, Կրեմլ, 17 դեկտեմբերի 1980 թ.

№ 3539—X



ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**3** Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը վերացնելու կոնվենցիան վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է.

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից վավերացման ներկայացված՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը վերացնելու կոնվենցիան, որը ՍՍՀՄ կառավարության անունից ստորագրվել է Կոպենհագենում, 1980 թվականի հուլիսի 17-ին, վավերացնել ստորագրման ժամանակ արված հետևյալ վերապահությամբ՝

«Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը իրեն կապված չի համարում կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների հետ, որի համաձայն երկու կամ մի քանի մասնակից պետությունների միջև սույն կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրարկման վերաբերյալ բանակցությունների ուղիով չուժված յուրաքանչյուր վեճ կողմերից մեկի խնդրանքով հանձնվում է արբիտրաժային քննության կամ միջազգային դատարան, և հայտարարում է, որ այդպիսի վեճը արբիտրաժային քննության կամ միջազգային դատարան հանձնելու համար ամեն մի առանձին դեպքում անհրաժեշտ է վեճին մասնակցող բոլոր կողմերի համաձայնությունը»:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲԲԵԺՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԵ

Մոսկվա, Կրեմլ, 19 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3565—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**4** Եկամուտների ու գույքի կրկնակի հարկումից խուսափելու մասին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Նորվեգիայի Թագավորության համաձայնագիրը վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է.

Վավերացնել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վավերացման ներկայացրած եկամուտների ու գույքի կրկնակի հարկումից խուսափելու մասին Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Նորվեգիայի Թագավորության համաձայնագիրը, որն ստորագրվել է Մոսկվայում, 1980 թվականի փետրվարի 15-ին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲԲԵԺՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3612—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**5** Արտոնագրային արարողության նպատակների համար միկրոօրգանիզմների ավանդատվության միջազգային նախաձեռնման մասին Բուդապեշտի պայմանագիրը վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է.

Վավերացնել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի վավերացման ներկայացրած Արտոնագրային արարողության նպատակների համար միկրոօրգանիզմների ավանդատվության միջազգային նախաձեռնման մասին Բուդապեշտի պայմանագիրը, որը Սովետական Միության անունից ստորագրվել է Բուդապեշտում, 1977 թվականի դեկտեմբերի 30-ին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲԲԵԺՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3615—X

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**6** «Հայնիդրոէներգաշին» շինարարական վարչությունը Աշխատանքային կարմիր դրոշի շֆանշանով պարգևատրելու մասին

Էներգետիկայի զարգացման գործում մատուցած ծառայությունների և տասներորդ հնգամյակում արտադրական բարձր ցուցանիշների հասնելու համար ՍՍՀՄ էներգետիկայի և էլեկտրիֆիկացիայի մինիստրության «Հայնիդրոէներգաշին» շինարարական վարչությունը պարգևատրել Աշխատանքային կարմիր դրոշի շֆանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲԲԵԺՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԵ

Մոսկվա, Կրեմլ, 22 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3594—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**7** ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գ. Մ. Մարուաշվիլուն ժողովուրդների բարեկամության շֆանշանով պարգևատրելու մասին

Բժշկագիտության զարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գեորգի Մինակիշ Մարուաշվիլուն պարգևատրել ժողովուրդների բարեկամության շֆանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲԲԵԺՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԵ

Մոսկվա, Կրեմլ, 22 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3584—X



ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

8 Գրող Ասկադ Մուխրարին (Ա. Մուխրարովին) ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական գրականության զարգացման գործում ունեցած վաստակի համար և ծննդյան վաթսուներեամյակի առթիվ գրող Ասկադ Մուխրարին (Ասկադ Մուխրարովին) պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳեորգիաՉե

Մոսկվա, Կրեմլ, 22 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3587—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

9 Միլիցիայի լեյտենանտ Վ. Ռ. Խուսահնովին Կարմիր աստղի շքանշանով պարգևատրելու մասին

Վտանգավոր հանցագործին ձերբակալելիս ցուցաբերած արիության և անձնուրաց գործողությունների համար միլիցիայի լեյտենանտ Վալերի Ռաշտովիչ Խուսահնովին պարգևատրել Կարմիր աստղի շքանշանով (ետմահու):

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳեորգիաՉե

Մոսկվա, Կրեմլ, 22 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3585—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

10 Ընկ. Կ. Ֆ. Կուլակովին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին

Անտառային տնտեսության զարգացման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան վաթսուներեամյակի առթիվ ՍՍՀՄ անտառային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ ընկ. Կոնստանտին Ֆյոդորովիչ Կուլակովին պարգևատրել «Պատվո նշան» շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳեորգիաՉե

Մոսկվա, Կրեմլ, 22 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3586—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

11 ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ն. Ա. Կրյուչկովին սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին

Սովետական կինոարվեստի զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար և ծննդյան յոթանասուներեամյակի առթիվ «Մոսֆիլմ» կինոստուդիայի դերասան, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Նիկոլայ Աֆանասևիչ Կրյուչկովին շնորհել սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան և «Մուրե ու մանգալ» ոսկե մեդալ:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳեորգիաՉե

Մոսկվա, Կրեմլ, 23 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3595—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

12 Ավիացիայի մարշալ Ե. Յա. Սավիցկուն Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական բանակին մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասուներեամյակի առթիվ ավիացիայի մարշալ Եվգենի Յակովլևիչ Սավիցկուն պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳեորգիաՉե

Մոսկվա, Կրեմլ, 23 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3596—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

13 Գրող Ս. Վ. Վահունուն (Խաչիկյանին) ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական գրականության զարգացման գործում ունեցած վաստակի համար և ծննդյան յոթանասուներեամյակի առթիվ գրող Սուրեն Վահունուն (Խաչիկյանին) պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳեորգիաՉե

Մոսկվա, Կրեմլ, 23 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3597—X



ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

14 Գրող Բ. Մամիշ-Ուլային ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական գրականության զարգացման գործում ունեցած վաստակի համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ գրող Բատուրջան Մամիշ-Ուլային պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳեՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 23 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3598—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

15 Կենտրոնական ներմիութենական ռադիոհաղորդումների հաղորդավարներ ընկ. ընկ. Օ. Ս. Վիսոցկայային և Յու. Բ. Լևիտանին «ՍՍՀՄ ժողովրդական արտիստ» պատվավոր կոչում շնորհելու մասին

Սովետական արվեստի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար կենտրոնական ներմիութենական ռադիոհաղորդումների հաղորդավարներ ընկ. ընկ. Օլգա Սերգեևնա Վիսոցկայային և Յուրի Բորիսովիչ Լևիտանին շնորհել «ՍՍՀՄ ժողովրդական արտիստ» պատվավոր կոչում:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳեՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 23 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3603—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

16 Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է. Լ. Անդրոնիկաշվիլուն Լենինի շքանշանով պարգևատրելու մասին

Ֆիզիկայի զարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էլեմբեր Լուարսաբովիչ Անդրոնիկաշվիլուն պարգևատրել Լենինի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳեՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3604—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

17 Ինտենդանտական ծառայության գեներալ-լեյտենանտ Ե. Ի. Գուլբերգին Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական բանակին մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ ինտենդանտական ծառայության գեներալ-լեյտենանտ Եֆիմ Իլյիչ Գուլբերգին պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳեՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3608—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

18 Ընկ. Պ. Գ. Մակեևային Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին

Կուսակցության ու կոմերիտական մարմիններում կատարած երկարամյա բեղմնավոր աշխատանքի համար և ծննդյան վաթսուներեամյակի առթիվ ՍՍԿԿ Կենտկոմին առընթեր կուսակցական վերահսկողության կոմիտեի անդամ ընկ. Պոլինա Գեորգիևնա Մակեևային պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳեՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3610—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

19 Գուրկու ջրային տրանսպորտի ինժեներների ինստիտուտ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին

Բարձրորակ կադրերի պատրաստման բնագավառում ձեռք բերած հաջողությունների և գետային տրանսպորտի զարգացման գործում ներդրած գիտական մեծ ավանդի համար Գուրկու ջրային տրանսպորտի ինժեներների ինստիտուտ պարգևատրել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳեՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3609—X



ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**20** Մոսկվայի տիկնիկային քատրոնը «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին

Մոսկվայի թատերական արվեստի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար Մոսկվայի տիկնիկային քատրոնը պարգևատրել «Պատվո նշան» շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵՃՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 24 դեկտեմբերի 1980 թ.

№ 3605—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**21** Ընկ. Գ. Ֆ. Կրամինովին Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին

Մամուլում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ «Զա ուրեժում» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, ՍՍՀՄ ժուռնալիստների միության վարչության քարտուղար Ընկ. Գա-նիկի Ֆյոդորովիչ Կրամինովին պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵՃՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 25 դեկտեմբերի 1980 թ.

№ 3621—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**22** Չեքոսլավիայի ՍՄԿԿ XXIV համագումարի անվան ագրեգատի գործարանը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին

Գյուղատնտեսական տեխնիկայի արտադրության զարգացման գործում ներդրած մեծ ավանդի և տասներորդ հնգամյակի առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար ՍՍՀՄ տրակտորային և գյուղատնտեսական մեքենաշինության մինիստրության Չեքոսլավիայի ՍՄԿԿ XXIV համագումարի անվան ագրեգատի գործարանը պարգևատրել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵՃՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 25 դեկտեմբերի 1980 թ.

№ 3618—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**23** Ընկ. Կ. Ի. Վաշենկոյին Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Բարձրորակ մասնագետների պատրաստման, գիտական հետազոտությունների զարգացման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան ութսունամյակի առթիվ Կիևի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր-կոնսուլտանտ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Իլյիչ Վաշենկոյին պարգևատրել Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵՃՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 25 դեկտեմբերի 1980 թ.

№ 3620—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**24** Ստավրոպոլի երկրամասի «Պրեդզոնի» սովխոզի բանվոր Ն. Ե. Ժուրբինին Կարմիր աստղի շքանշանով պարգևատրելու մասին

Վտանգավոր հանցագործին ձերբակալելիս ցուցաբերած արիության և խիզախության համար Ստավրոպոլի երկրամասի «Պրեդզոնի» սովխոզի բանվոր Նիկոլայ Եֆիմովիչ Ժուրբինին պարգևատրել Կարմիր աստղի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵՃՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 25 դեկտեմբերի 1980 թ.

№ 3619—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**25** Ընկ. Է. Մ. Կրուստինսոնին Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին

Հեղափոխական շարժմանը մատուցած ծառայությունների, հասարակական ակտիվ գործունեության համար և ծննդյան իննսունամյակի առթիվ Ընկ. Էմիլյա Մարտինովնա Կրուստինսոնին պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵՃՆԵՎ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.

№ 3630—X





ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

26 ՍՍՀՄ բժշկական արդյունաբերության մինիստրության Սվերդլովսկի «Ուրալսինթեզ» ֆիմիկա-դեղագործական արտադրական միավորման առավել աչքի ընկած աշխատողներին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին

Տասներորդ հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու գործում ձեռք բերած հաջողությունների համար պարգևատրել.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԳՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Նինա Մաքսիմովնա Պերվիշինային — ապարատավարուհի

«ՊԱՏՎՈ ՆՇԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Տամարա Լվովնա Կազինիկովային — արտադրամասի պետի տեղակալ Ալեքսանդր Իվանովիչ Պոնոմարյովին — վարպետ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՌՔԻ II ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Վերա Իվանովնա Կոլոմեյցկային — ապարատավարուհի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՌՔԻ III ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ

Պյոտր Ֆյոդորովիչ Մամաևին — նորոգող փականագործ Գալինա Պավլովնա Խինկինային — ապարատավարուհի

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՐԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԳԱՍՈՎ

Վլադիմիր Ֆյոդորովիչ Ավրամենկոյին — գազազոդող Ալեքսինա Տիմոֆեևնա Բարանովային — ապարատավարուհի Վասիլի Ֆյոդորովիչ Զիկովին — հյուան Ալեքսանդր Ալեքսեևիչ Պերմյակովին — էլեկտրասարքավորումների նորոգման էլեկտրամոնտյոր Զինաիդա Ֆյոդորովնա Ֆյոդորովային — տեխնիկ-լաբորանտ

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵԳԱՍՈՎ

Նինա Եգորովնա Անտոպովային — հատիկավորող Վերոնիկա Ալեքսանդրովնա Վեդերնիկովային — ինժեներ-տեխնոլոգ Գրիգորի Վասիլևիչ Օբորինին — նորոգող փականագործ Լարիսա Արկադևնա Պյատկովային — լաբորանտուհի:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. Գեորգուշև

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.

№ 3625—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

27 Ընկ. Վ. Ի. Լարինին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական գրականության զարգացման գործում ունեցած վաստակի, մամուլում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և ծննդյան վաթսուներեքամյակի առթիվ գրող, «Պրոստոր» հանդեսի գլխավոր խմբագիր

ընկ. Վալենտին Իվանովիչ Լարինին պարգևատրել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. Գեորգուշև

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.

№ 3631—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

28 Ընկ. Ա. Պ. Ուշակովին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Արհմիութենական մարմիններում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և ծննդյան վաթսուներեքամյակի առթիվ ՀԱՄԿՈ-ի քարտուղար ընկ. Անդրեյ Պետրովիչ Ուշակովին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. Գեորգուշև

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.

№ 3622—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

29 ՍՍՀՄ-ում Գերմանական Դեմոկրատական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան ընկ. Հարրի Օտտին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական Միության և Գերմանական Դեմոկրատական Հանրապետության բարեկամության ամրապնդման ու համակողմանի գործակցության զարգացման ասպարեզում կատարած աշխատանքի համար ՍՍՀՄ-ում Գերմանական Դեմոկրատական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան ընկ. Հարրի Օտտին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. Գեորգուշև

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.

№ 3628—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

30 Ընկ. Կ. Սագինդիկովին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Կուսակցական մամուլում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և ծննդյան յոթանասուներեքամյակի առթիվ «Կազախստան կոմունիստ» («Կազախստանի կոմունիստ») հանդեսի գլխավոր խմբագիր ընկ. Կուրմանբեկ Սագինդիկովին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևի

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. Գեորգուշև

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.

№ 3623—X



ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**31** Ղազախական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Կարատաևին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Բանասիրական գիտությունների դարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ Ղազախական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մուհամեջան Կարատաևին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3634—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**32** ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Ֆ. Գաուզեին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Բժշկագիտության դարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գեորգի Ֆրանցևիչ Գաուզեին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3635—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**33** Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վ. Գ. Պինչուկին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին

Բժշկագիտության դարգացման, գիտական կադրերի պատրաստման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան հիսնամյակի առթիվ Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վադիմ Գրիգորևիչ Պինչուկին պարգևատրել «Պատվո նշան» շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3623—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**34** Գրող Տ. Ի. Ջատիևին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական գրականության բնագավառում ունեցած վաստակի համար և ծննդյան յոթանասունամյակի առթիվ գրող Տոտիրբեկ Իսմայիլովիչ Ջատիևին պարգևատրել «Պատվո նշան» շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 26 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3632—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**35** Ընկ. Վ. Ա. Մալիշևին Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական մամուլի դարգացման գործում մատուցած ծառայությունների համար և ծննդյան ութսունամյակի առթիվ ընկ. Վասիլի Ալեքսեևիչ Մալիշևին պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 29 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3651—X

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**36** Ընկ. Լ. Ա. Բեգիմենսկուն Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական մամուլում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար և ծննդյան վաթսունամյակի առթիվ քաղաքական տեսաբան, «Նովոյե վրեմյա» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ ընկ. Լև Ալեքսանդրովիչ Բեգիմենսկուն պարգևատրել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 29 դեկտեմբերի 1980 թ.  
№ 3652—X



ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**37** Ընկ. Ռ. Ս. Օվինենիկովին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Գիվանագիտական աշխատանքում մատուցած ծառայությունների համար և ծննդյան հիանաժյակի առթիվ ՄԱԿ-ին առընթեր ՍՍՀՄ մշտական ներկայացուցչի տեղակալ ընկ. Ռիչարդ Սերգեևիչ Օվինենիկովին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնև

